Աշխատանքի ծածկագիր 8420

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 9-րդ, 10-րդ, 13-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 24-րդ, 26-րդ, 28-րդ, 30-րդ, 34-րդ, 38-րդ հարցերը:

Քրեական դատավարության բաժին

Հարց 9

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/տարբերակը այն է՝ ճիշտ պատասխանը բացակայում է, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին որոշմանը, որը լիովին համահունչ է հարցադրմանը:

Հարց 10

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝/ բողոքարկել դատախազին՝ չկասեցնելով դրա կատարումը: *Մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն, այն է՝* բողոքարկել դատախազին՝ կասեցնելով դրա կատարումը, *քանի որ քննչական բաժնի պետը նման իրավասություն չունի:*

Հարց 13

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք և տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ, *մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝* անձին մեղսագրվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ արարք, տուժողը հաշտվել է ենթադրյալ հանցանք կատարած անձի հետ և առկա է հարուցված քրեական գործ, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը՝ իր մեջ ներառելով նաև պարտադիր համարվող՝ քրեական գործ հարուցված լինելու հանգամանքը:*

Հարց 15

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է մեղադրյալի կողմից, և դրա վերաբերյալ այդ տեղեկություններն ուղղակիորեն առնչվում են մեղադրյալին վերագրվող արարքին, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* և՛<<ա>> և՛ <<գ>> կետերում նշված անձանց, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը՝ իր մեջ ներառելով նաև ֆիզիկական անձի վերաբերյալ դրույթը:*

Հարց 18

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ օրենքն արգելում է խափանման միջոցների կապակցված կիրառումը, մինչդեռ ճիշտ պատասխանն է բ-ն՝ այն է՝ ստորագրությունը չհեռանալու մասին, գրավը, անձնական երաշխավորությունը և կազմակերպության երաշխավորությունը, *քանի որ այն պարունակում է լիարժեք պատասխան հարցադրմանը, ստորագրությունը չհեռանալու մասին, գրավը, անձնական երաշխավորությունը և կազմակերպության երաշխավորությունը կարող են կապակցված կիրառել:*

Հարց 19

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը:

Հանձնաժողովը, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ Քննիչը համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինիս ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> եզրույթը չի կարող համարվել <<պարտադիր>>:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 22

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ եթե ամբաստանյալն արդարացվել է, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* բոլոր պատասխանները ճիշտ են *քանի որ բոլոր դեպքերում կայացված դատավճիռն անձամբ կատարում է Դատարանը:*

Հարց 24

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ արարքի իրավաբանական որակումը չի համապատասխանում արարքի նկարագրությանը, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ մեղադրական եզրակացությունը մեղադրողին վերադարձնելու ընթացակարգ գոյություն չունի:*

Հարց 26

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ մերժելու Ա-ի բողոքը, քանի որ քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին նախաքննության մարմնի որոշումը որևէ կերպ չի կարող առնչվել նրա իրավունքներին ու օրինական շահերին:

Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 28

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ այո, քանի որ դատավորը կաշկանդված չէ գործի մինչդատական վարույթում արված եզրահանգումներով, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է* ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ, *քանի որ արտահայտել է դիրքորոշում առաջադրված մեղադրանքի վերաբերյալ:*

Հարց 30

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ եթե դատական քննության ընթացքում հայտնվում է ամբաստանյալը և ներկայանում դատարան, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝ բոլոր պատասխաններն էլ ճիշտ են, բոլոր պատասխանների դեպքում հեռակա կարգով սկսված վարույթը կարող է շարունակվել ընդհանուր կարգով:*

Հարց 34

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը, այն է՝ մեղադրյալի ազգականը վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման կայացման պահից երկօրյա ժամկետում վճարել է գրավի գումարը, *մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝* <<ա>>, <<բ>> և <<գ>> կետերում նշված դեպքերում, *հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջադրանքի ճիշտ տարբերակը հարցի ամբողջական և լիարժեք պատասխանն է, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:*

Հարց 38

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ տեղանքի և շենքի զննություն, մինչդեռ ճիշտ պատասխանն է դ-ն՝ այն է՝ ճիշտ պատասխանը բացակայում է, քանի որ նշված բոլոր գործողությունները կատարելիս առանձին արձանագրություն չի կազմվում:

<u>Քրեական իրավունքի բաժին</u>

Հարց 6

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը, այն է՝ կայացնի մեղադրական դատավճիռ՝ չնշանակելով որևէ պատիժ, քանի որ հոդվածի սանկցիայով նախատեսված պատիժներից և ոչ մեկը կիրառելի չեն Բ-ի նկատմամբ, մինչդեռ ճիշտ պատասխանն է բ-ն՝ այն է՝ նշանակի

օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ/ ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված/ խնամքին երեք տարեկան երեխա գտնվելու հանգամանքի հիման վրա, *քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն <<Դատավճիռը կայացնելու պահին (...) խնամքին մինչև ութ տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ կարող է նշանակվել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, եթե սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված ամենամեղմ պատժատեսակը կալանքն է, և նախատեսված մյուս պատժատեսակների նշանակումը դատարանը գտնում է ոչ համաչափ (...) >>, հետևաբար վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով հարցադրման մեջ առկա հանգամանքները, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի, քանի որ ճիշտ պատասխանն է <<բ>> կետը, այն է՝ նշանակի օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված)՝ խնամքին երեք տարեկան երեխա գտնվելու հանգամանքի հիման վրա:*

Հարց 10

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը, այն է՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով երկուսից ավելի անձանց սպանություն, մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝ երկուսից ավելի անձանց սպանություն, քանի որ այն բխում է խնդրում նկարագրված փաստական հանգամանքներից, իսկ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանության վերաբերյալ փաստական տվյալ խնդրում առկա չէ:

Հարց 26

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ խոշոր չափերով կաշառք ստանալը, որը կատարվել է շորթմամբ, մինչդեռ ճիշտ պատասխանն է գ-ն՝ այն է՝ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալ, որը կատարվել է շորթմամբ, քանի որ այն բխում է խնդրում նկարագրված փաստական հանգամանքներից և լիովին ներառում է խնդրում առկա փաստական հանգամանքները:

Հարց 30

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից դ/ տարբերակը, այն է՝ սպանության փորձ, մինչդեռ ճիշտ պատասխանն է բ-ն՝ այն է՝ այլ անձին ՄԻԱՎ հարուցիչով դիտավորությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին, և սպանության փորձ՝ հանցանքների համակցությամբ, քանի որ այն բխում է խնդրում նկարագրված փաստական հանգամանքներից և լիովին ներառում է խնդրում առկա փաստական հանգամանքները:

Հարց 35

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը, այն է՝ իրավաչափ է գույքի բռնագրավում լրացուցիչ պատժից ազատելը, իսկ ազատազրկումը տուգանքով փոխարինելը իրավաչափ չէ, մինչդեռ ճիշտ պատասխանն է ա-ն՝ այն է՝ ոչ, քանի որ Գ-ն դատապարտվել է ծանր հանցագործության համար, որի պարագայում տվյալ հոդվածը կիրառելի չէ:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ *8420* ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 19-րդ, 26-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր՝ ընդհանուր 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ